ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈԳՈՒ ԱՆՁ ԼԻՆԵԼԸ
SPECIAL TOPIC: THE PERSONHOOD OF THE SPIRIT

Ա. Հին Կտակարան

ՀԿ-ում «Աստծո Հոգին» (այսինքն՝ *ruach*) մի ուժ էր, որը իրականացնում էր ՅԱՀՎԵԻ նպատակը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈԳԻՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ), I, սակայն մի փոքր ակնարկ կա, որ նա անձնավորություն է (տես՝ Եսայի 48:16, 61:1):

Բ. Նոր Կտակարան

Սակայն ՆԿ-ում (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈԳԻՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ), II, III, IV, հայտնվում է Սուրբ Հոգու լիակատար անձ լինելը և անձնավորության էությունը՝

1. Նա կարող է հայհոյվել (տես՝ Մատթ. 12:31, Մարկ. 3:29)
2. Նա սովորեցնում է (տես՝ Ղուկ. 12:12, Հովհ. 14:26)
3. Նա վկայություն է տալիս (տես՝ Հովհ. 15:26)
4. Նա համոզում է, առաջնորդում է (տես՝ Հովհ. 16:7-15)
5. Նա կոչվում է «ով» (այսինքն՝ *hos*, տես՝ Եփես. 1:14)
6. Նա կարող է վշտանալ (տես՝ Եփես. 4:30)
7. Նա կարող է մարել (տես՝ 1 Թեսաղ. 5:19)
8. Նրան կարող են հակառակվել (տես՝ Գործք 7:51)
9. Նա պաշտպանում է հավատացյալներին (տես՝ Հովհ. 14:26, 15:26, 16:7)
10. Նա փառավորում է Որդուն (տես՝ Հովհ. 16:14)

Երրորդության վերաբերյալ տեքստերը (այստեղ տրված են շատ հատվածներից միայն երեքը, ամբողջական ցանկը կարող եք գտնել ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ) նույնպես խոսում է երեք անձի մասին՝

1. Մատթ. 28:19
2. 2 Կորնթ. 13:14
3. 1 Պետ. 1:2

«Հոգի» հունարեն բառը (*pneuma*) ՉԵԶՈՔ է, երբ վերաբերում է Հոգուն, սակայն ՆԿ-ը հաճախ է գործածում ԱՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆԸ մատնացույց անելու, որ խոսքը վերաբերում է անձի (այսինքն՝ Հովհ. 16:8, 13-14)

Հոգին կապված է մարդկային գործունեության հետ՝

1. Գործք 15:28
2. Հռոմ. 8:26
3. 1 Կորնթ. 12:11
4. Եփես. 4:30

Գ. Գործքը՝

Գործք Առաքելոցի հենց սկզբում շեշտադրվում է Հոգու դերը (ինչպես Հովհաննեսի Ավետարանում): Պենտեկոստեն՝ Հոգեգալուստը, Սուրբ Հոգու գործունեության սկիզբը չէր, այլ մի նոր գլուխ էր՝ մի նոր սկիզբ: Հիսուսը միշտ ուներ Հոգուն: Նրա մկրտությունը Հոգու գործի սկիզբը չէր, այլ նոր գլուխ էր: Հոգին Հոր նպատակի համար արդյունավետ միջոց է, որպեսզի Իր պատկերով ստեղծված ամբողջ մարդկությանը վերականգնի (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ): Սա Հոգու՝ Երրորդության երրորդ Անձի դարաշրջանն է:

Դ. Աստվածաբանական զարգացումը

Երրորդությունը պատմականորեն ձևավորված բանաձև է՝ տեղեկացված աստվածաշնչյան նյութերով:

1. Հիսուսի լիակատար Աստվածությունը՝ Հորը համահավասար, հաստատվել է մ.թ. 325թ-ին Նիկիայի Խորհրդի ժամանակ (տես՝ Հովհ.1:1, Փիլ.2:6, Տիտոս 2:13):
2. Հոգու լիակատար անձ լինելը և Աստվածությունը՝ համահավասար Հորը և Որդուն, հաստատվել է մ.թ.381թ-ին՝ Կոստանդնուպոլիսի Խորհրդի ժամանակ
3. Երրորդության վարդապետությունը ամբողջությամբ արտահայտվել է Օգոստինոսի աշխատության մեջ, որը կոչվում է De Trinitate: Իրոք առեղծվածային է սա: Սակայն ՆԿ-ը հաստատում է մեկ աստվածային էություն (տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ</u>) երեք հավիտենական անձերի արտահայտմամբ՝ դրսևորմամբ (Հայրը, Որդին և Սուրբ Հոգին, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ</u>):